ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 98

«21» 12 2021 թ. գ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի, Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթների պատշաճ իրականացումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2007 թվականի դեկտեմբերի 29-ի N 92 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2019 թվականի դեկտեմբերի 18-ի N 70 հրամանով՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ ե մ՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական ստորաբաժանումներին կնիքներ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական ստորաբաժանումներին տրամադրված կնիքների ձևերը՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝ մինչև 2021 թվականի դեկտեմբերի 24-ն ապահովել կնիքների տրամադրումը Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական ստորաբաժանումներին:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2021 թվականի դեկտեմբերի 21-ի
N 98 հրամանի

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և Հայաստանի Հանրապետության դատախազության աջակցող մասնագիտական ստորաբաժանումներին (այսուհետ նաև՝ ստորաբաժանում) կնիքներ տրամադրելու կարգը:

2. Ստորաբաժանումներին տրամադրված կնիքներն օգտագործվում են պաշտոնական փաստաթղթերը և այլ առարկաները կնքելու համար:

3. Անձնական կամ այլ նպատակներով կնիքներն օգտագործելը, այլ անձանց փոխանցելը կամ կորցնելը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն:

4. Ստորաբաժանմանը հատկացված կնիքի պահպանությունը, դրանք վնասումից և ոչնչացումից պաշտպանությունն իրականացնում է ստորաբաժանման ղեկավարը:

5. Կնիքների պատվիրումը և դրանք դատախազներին տրամադրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը (այսուհետ՝ գլխավոր քարտուղար):

6. Կնիքներ տրամադրվում են հետևյալ ստորաբաժնումներին՝

1) Ֆինանսատնտեսական վարչություն,
2) Անձնակազմի կառավարման վարչություն,
3) Ընդհանուր բաժին,
4) Արխիվի բաժին,
5) Առաջին բաժին,
6) Զինվորական կենտրոնական դատախազության տարածքային վարչություն,
7) Երևան քաղաքի դատախազության տարածքային վարչություն,
8) Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,
9) Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,
10) Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

11) Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

12) Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության տարածքային բաժին,

13) Շենգավիթ վարչական շրջանի դատախազության տարածքային բաժին,

14) Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության տարածքային բաժին,

15) Կոտայքի մարզի դատախազության տարածքային բաժին,

16) Արարատի մարզի դատախազության տարածքային բաժին,

17) Արմավիրի մարզի դատախազության տարածքային բաժին,

18) Արագածոտնի մարզի դատախազության տարածքային բաժին,

19) Շիրակի մարզի դատախազության տարածքային բաժին,

20) Լոռու մարզի դատախազության տարածքային բաժին,

21) Տավուշի մարզի դատախազության տարածքային բաժին,

22) Գեղարքունիքի մարզի դատախազության տարածքային բաժին,

23) Վայոց ձորի մարզի դատախազության տարածքային բաժին,

24) Սյունիքի մարզի դատախազության տարածքային բաժին,

25) Երևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

26) Գորիսի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

27) Լոռու կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

28) Սևանի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

29) Շիրակի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

30) Եղեգնաձորի կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

31) Թիվ 1 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

32) Թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին,

33) Թիվ 3 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժին:

II. ԿՆԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

7. Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարի կնիքը ռետինե է, շրջանաձև, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ» կրկնվող գրառումը, շրջանագծի ներսում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերը:

8. Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչությանը տրամադրվում է ռետինե շրջանաձև կնիք, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» գրառումը, շրջանագծի ներսում՝ «ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը (Հավելված 2 Ձև 1):

9. Հայաստանի Հանրապետության դատախազության անձնակազմի կառավարման վարչությանը տրամադրվում է ռետինե շրջանաձև կնիք, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» գրառումը, շրջանագծի ներսում՝ «ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ» գրառումը (Հավելված 2 Ձև 2):

10. Հայաստանի Հանրապետության դատախազության ընդհանուր բաժնին տրամադրվում են՝

1) ռետինե շրջանաձև կնիք, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ» գրառումը, շրջանագծի ներսում՝ «ՓԱԹԵԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ» գրառումը (Հավելված 2 Ձև 3):

2) ռետինե շրջանաձև կնիք, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» գրառումը, շրջանագծի ներսում՝ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ» գրառումը (Հավելված 2 Ձև 4):

3) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնից քիչ բարձր՝ «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ» գրառումը, ներքևում՝ «Մուտքի No» գրառումը և ամսաթիվը (Հավելված 2 Ձև 5):

4) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնից քիչ բարձր՝ «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ» գրառումը, ներքևում՝ «Ելքի No» գրառումը և ամսաթիվը (Հավելված 2 Ձև 6):

5) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, բաղկացած երեք հավասար ուղղանկյուններից: Առաջին ուղղանկյան մեջ առկա է «0010 ք. Երևան Վ. Սարգսյան – 5 Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն», երկրորդ ուղղանկյան մեջ՝ «0010 г. Ереван В. Саргсян-5 Генеральная прокуратура Республики Армения», երրորդ ուղղանկյան մեջ՝ « 0010 Yerevan V. Sargsyan – 5 Prosecutor General's Office of the Republic of Armenia» գրառումը (Հավելված 2 Ձև 7):

11. Հայաստանի Հանրապետության դատախազության արխիվի բաժնին տրամադրվում է ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնում «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՐԽԻՎԻ ԲԱԺԻՆ ОТДЕЛ АРХИВА ПРОКУРАТУРЫ РА» գրառումը (Հավելված 2 Ձև 8):

12. Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժնին տրամադրվում են՝

1) ռետինե շրջանաձև կնիք, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» գրառումը, երրորդ շրջանագծի երկայնքով՝ «PROSECUTOR'S OFFICE OF THE REPUBLIC OF ARMENIA» գրառումը, շրջանագծի ներսում՝ «ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ FIRST DEPARTMENT» գրառումը (Հավելված 2 Ձև 9):

2) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնից քիչ բարձր՝ «ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ» գրառումը, ներքևում՝ «Մուտքի No» գրառումը և ամսաթիվը (Հավելված 2 Ձև 10):

3) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնում «ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ» գրառումը (Հավելված 2 Ձև 11):,

4) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնում «ՇՏԱՊ» գրառումը (Հավելված 2 Ձև 12):

13. Սույն հավելվածի 6-րդ կետի 7-33-րդ ենթակետերում նշված ստորաբաժանումներին տրամադրվում են

1) ռետինե շրջանաձև կնիք, տրամագիծը՝ 44 միլիմետր, առաջին շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» կրկնվող գրառումը, երկրորդ շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» գրառումը և ստորաբաժանման անվանումը, շրջանագծի ներսում՝ «ՓԱԹԵԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ» գրառումը (Հավելված 2 Ձև 13):

2) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնից քիչ բարձր՝ ստորաբաժանման անվանումը, ներքևում՝ «Մուտք No» «թերթ» գրառումները և ամսաթիվը (Հավելված 2 Ձև 14):

3) ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 25մմ, կենտրոնից քիչ բարձր՝ ստորաբաժանման անվանումը, ներքևում՝ «Ելքի No» «թերթ» գրառումները և ամսաթիվը (Հավելված 2 Ձև 15):

14. Քրեական կենտրոնական դատախազության տարածքային վարչությանը, ի թիվս սույն հավելվածի 13-րդ կետում նշված կնիքների, տրամադրվում է ուղղանկյուն կնիք, երկարությունը 65 մմ, լայնությունը 50մմ, վերևի ձախ անկյունում՝ 10մմ չափերով քառակուսում մեջ՝ «_____թ.» գրառումը, վերևում կենտրոնական հատվածում՝ «ԳԱՂՏՆԻ» գրառումը, կենտրոնից քիչ բարձր՝ «Ա. Տ. Հաշվառման ԳՐՔՈՒՄ N _____» գրառումը, ներքևում՝ ««_____» _____N 20 թ.» գրառումը, իսկ ամենաներքևում՝ «ՀՀ Քրեական դատախազություն» գրառումը (Հավելված 2 Ձև 16):

III. ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

15. Ստորաբաժանմանը կնիքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժինը (այսուհետ՝ առաջին բաժին):

16. Առաջին բաժինը վարում է «ՀՀ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին տրամադրվող գրանցված և համարակալված կնիքների հաշվառման» մատյան (Ձև 1): Կնիքը ստորաբաժանման պետին տրամադրվում է նշված մատյանում հանձնողի և ընդունողի ստորագրությամբ, համապատասխան կնիքով վավերացմամբ: Մատյանում նշվում է նաև կնիքի տրամադրման ամիսը և ամսաթիվը:

17. Կնիքը վնասվելու կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերում ստորաբաժանման պետը զեկուցագրով այդ մասին տեղեկացնում է վերադասին:

Վերադասը կնիքը վերադարձնում է առաջին բաժին՝ նորը տրամադրելու համար: Կնիքները ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գլխավոր քարտուղարի հրամանով ստեղծված հանձնաժողովի եզրակացությամբ (Ձև 2):

18. Կնիքի կորելու կամ հափշտակելու վերաբերյալ ստորաբաժանման պետն այդ մասին անհապաղ զեկուցագրով տեղեկացնում է վերադասին և հայտարարություն տալիս Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում:

19. Սույն կարգի 17-րդ և 18-րդ կետերում նշված դեպքերում նոր կնիք տրամադրվում է կնիքը կորելու, վնասման կամ հափշտակության հանգամանքները պարզելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Կորցրած կամ հափշտակված կնիքը համարվում է անվավեր գլխավոր քարտուղարի հրամանով: Անվավեր համարելու մասին տրվում է հրապարակային հաղորդագրություն կամ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ձև 1

Մ Ա Տ Յ Ա Ն

ՀՀ դատախազության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին տրամադրվող գրանցված և համարակալված կնիքների հաշվառման

Հ/Հ	Կնիքի համարը	Ում է տրամադրվել Ա.Ա.Հ.	Պաշտոնը	Ստացողի ստորագրությունը	Հանձնողի ստորագրությունը	Տրամադրման ամիսը, ամսաթիվը	Նշումներ ոչնչացման մասին

Ձև 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N _____

Հանձնաժողովը որոշեց _____
(նշել ստորաբաժանման անվանումը)

_____

_____ին

Հատկացված _____
(նշել կնիքի տեսակը)

ճանաչել անվավեր և հանձնել ոչնչացնել

_____
(նշել ոչնչացման հիմքերը)

ոչնչացվող կնիքի դրոշմը

Հանձնաժողովի նախագահ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի անդամներ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

«___» _____ 20 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2021 թվականի դեկտեմբերի -ի
N հրամանի

Ձև 1

Հայաստանի Հանրապետության դատախազության ֆինանսատնտեսական վարչության կնիքի նմուշը

◄ 44,00 ►

Ձև 2

Հայաստանի Հանրապետության դատախազության անձնակազմի կառավարման վարչության ռետինե կնիքի նմուշը

◄ 44,00 ►

Ձև 3

44,00 мм

Ձև 4

44,00

Ձև 5

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Տոմսի No _____

«____»_____20 թ.

25,00

65,00

Ձև 6

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ

Ելքի No _____

«____»_____20 թ.

25,00

65,00

Ձև 7

0010 ք. Երևան Վ. Սարգսյան-5 Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն
0010 г. Ереван В. Саргсян-5 Генеральная прокуратура Республики Армения
0010 Yerevan V. Sargsyan-5 Prosecutor General's Office of the Republic of Armenia

25,00

65,00

Ձև 8

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԱՐԽԻՎԻ ԲԱԺԻՆ
ОТДЕЛ АРХИВА
ПРОКУРАТУРЫ РА

25,00

65,00

Ձև 9

ԱՌԱՋԻՆ
ԲԱԺԻՆ
FIRST
DEPARTMENT

44,00

Ձև 10

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

Առաքի No _____

«____» _____ 20 թ.

25,00

65,00

Ձև 11

ՀՈՒՅԺ ԳԱՂՏՆԻ

25,00

65,00

Ձև 12

ՇՏԱՊ

25,00

65,00

Ձև 13

44,00

Ձև 14

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ և ՔԱՂԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

_____Մուտքի No _____

թերթ «____»_____20 թ.

25,00

65,00

Ձև 15

ՀՀ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ և ՔԱՂԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԻՆ

_____ելքի No _____

թերթ «____»_____20 թ.

25,00

65,00

Ձև 16

_____ թ.

ԳԱՂՏՆԻ

Ա. Տ. Հաշվառման
ԳՐՔՈՒՄ N ____

«___»_____ N 20 թ.

ՀՀ Քրեական դատախազություն

50,00

65,00